բելի է իջնել յատակը, ուր կայ որբանի ձևով քար մը, որ մարդաչափ փորուած է և կը կոչուի Իսայի պէշիկ, որբան Քրիստոսի։ Անոր արտաքին երկարութիւնն է մէկ կանգուն եւ 21 մատ, միջին երկարութիւնը՝ մէկ կանգուն և 11 մատ, թանձրութիւնը 4.5 մատ, եւ մէջի լայնութիւնը մէկ կանգուն (Արծ. էջ 17–18)։

Seawulf կը գրէ 1102ին, թէ Տաճարին մէջ կար աղօթարան մը, ուր կը գտնուէին Քրիստոսի որբանը, իր լուացարանը և Ս. Կոյսի բազմոցը (E. T. P. էջ 41, Bar. gd. էջ 144)։

10. Ոսկի դուռը.— Յիսուս ո՞ր ճանապարհով մտաւ Երուսաղէմ, երբ Զիթենեաց լեռնէն հանդիսաւոր կերպով մուտք գործեց. եկեղեցական աւանդութիւնը այս կէտին վրայ կը տարբերի։ Ի հնումն Ծաղկազարդի կիւրակէին թափօրը տեղի կ'ունենար Զիթենեաց լեռնէն մինչև քաղաքին Բենիամինի դուռը. յետոյ Տաճարին հրապարակէն շեղելով՝ կը հասնէր Ս. Յարութեան Տաճարը, ինչպէս կը յիշէ Էթէրիա ուխտաւորուհին։ Դրան մօտ, ոչխարաց աւազանին քով թափօրը կը կենար։ Այս թուականին Յիսուսի մուտք գործած դուռը Բենիամինի դուռը կը թուի։ Միայն Խաչակրաց ժամանակ, Տաճարի հրապարակին արևելեան դուռը փոխանակեց Բենիամինի դրան, որքան թափօրին, նոյնքան Յիսուսի Երուսաղէմ մտնելու վերաբերեալ աւանդութեան համար։

Տաճարին այս Ոսկի դուռ ըսուածը առաւելութիւն մը կը ներկայացնէ. իր ներկայ շինուածքը որ զարդարուած է հռովմէական վերջին արուեստով, և որ թերևս Հերակլ կայսեր վերագրուի, իր բարաւորնե-